ԱԶԳԱՅԻՆ

ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. ԾՆՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ՀԱՆԴԷՍ Ի ՏՓԽԻՍ.

Նորին Վեհ. Օծութեան Ս. Կաթողիկոսի Օծման Գ-րդ Տարեդարձին առթիւ՝ խիստ փառաւոր և շքեղ հանդէսներ եղան ՚ի Տփխիս։ Թէև ՚ի 21-ն Մայիսի էր Տարեդարձը, բայց ՚ի տօնի Ս. Համբարձման՝ Թէլէթի վանուց տօնն լինելով, յուխտ և ուխտագնացութիւն պէտք էր երթային Տփխիսաբնակ Ազգայինք ըստ մեծի մասին. ուստի նոյն հանդէսը մի քանի օր յետոյ կատարուեցաւ ՚ի 24-ն նոյն ամսոյ՝ յաւուր կիւրակէի։

Շաբաթ օրը մայիս 23-ին Եկեղեցական արժանաւոր հանդիսիւ՝ Վեհ. Կաթողիկոս էջ և գնաց յերեկոյեան եկեղեցին։

Յաւուր կիւրակէի առաւօտուց 24-ին ՚ի ժամ Ս. Պատարագի՝ զոր մատոյց Գեր. Պետրոս եպիսկոպոս, սովորական հանդիսիւ գնաց Վեհ. Կաթողիկոս ՚ի Ս. Եկեղեցի, ուր ինչպէս և եկեղեցւոյ արտաքին սրահին մէջ՝ ամեն կարգի և աստիճանի՝ արանց և կանանց բազմութիւն յոյժ լցեալ և խռնեալ էր։

Յետ աւարտման Ս. Պատարագի՝ Նորին Ս. Օծութիւն հանդիսիւ ելաւ յԵկեղեցւոյ և եկն ՚ի Վեհարանն։

Մի քանի րոպէ անցած՝ երբ Եկեղեցւոյ արտաքին սրահին մէջ՝ Եկեղեցական դասն՝ որոյ պարագլուխ էր Գեր. Մակար Արք եպիսկոպոս՝ Թեմական-Առաջնորդըն, Թափօր կազմելով պատրաստուած էր Մաղթանքի հանդէսը կատարելու համար, Նորին Ս. Օծութիւնն Վեհարանի մեծ դահլճին՝ սրահի վերայ եղող և արդէն գեղեցիկ պատրաստեալ և զարդարեալ պատշգամը ելաւ, որոյ ընդ առաջ Թափօրն յօրինեալ էր։

Սկսաւ սրտաշարժ Մաղթանքը։ Եւ մինչ Հայր Աստուած երգը պէտք էր սկսանիլ, տիրեց լռութիւնը, և բարեկրօն Ստեփաննոս Աւագ Քահանայ Մանդինեանց եկն և կանգնեցաւ ՚ի մէջ Թափօրին և ընթերցաւ մի յարմար և գեղեցիկ Ճառ (զոր ստորև ունիմք հաղորդել ընդ այլ երկուսըն)։ Ապա "Հայկական Աշխարհի" Խմբագիր Մեծարգոյ Ս. Ստեփան Ներկայացաւ ՚ի մէջ հանդիսին, և սկսաւ կարդալ մի Ճառ. և մինչ աւարտեց, Ս. Կաթողիկոսը ՚ի պատշգամէ անտի խօսեցաւ Թէպէտ համառօտ, այլ ազդու և սրտաշարժ ատենաբանութիւն՝ տասն րոպէի չափ։ Որով Նորին Ս. Օծութիւն յայտնեց, եթէ՝ "Ես անմոռաց ՚ի մտի ունելով իմ ,,Հայրապետական սեպուհ և սրբազան ,,պարտաւորութիւնքը, զցայգ և զցերեկ՝ ,,անհանգիստ ոգւով և տքնութեամբք ,,ջանադիր եմ պարտաւճար հանդիսա-,,նալ։ Այսպիսի հանդէսներ՝ Ճառեր և ,,գովեստներ երբէք և երբէք չկարեն մը-,,խիթարել զիս, այլ առաւել ևս խոր ,,կ՚ազդեն սրտիս և կը յիշեցնեն իմ սե-,,պուհ և պաշտելի պարտքերս, զորս ան-,,հրաժեշտ հարկաւորութեամբ պարտիմ ,,կատարել յօգուտ և ՚ի յառաջադիմու-,,թիւն սիրելի Ազգիս և Ս. Եկեղեցւոյս"։

,,Ահա՝ երորդ տարին լրացաւ՝ չորրորդը սկսաւ է. արդ այսօր յայսմ հանդիսի ներկայացեալ՝ իմ խղճի և Աստուծոյ առջև կը մտածեմ մեծաւ սարսափմամբ, թէ արդեօք՝ կարողացա՞ և անցեալ տարի՝ իմ անհրաժեշտ և սրբազան պարտաւորութիւնքը վճարել առ Աղգս և առ Ս. Եկեղեցիս։ Եւ ըստորում այսօր ոչ յԱջմիածին, այլ ասա՝ Ձեզք կատարի այս հանդէս, ուրեմն Ձեզ անկ է և զձեզ աղաչեմ ո՛ Եկեղեցականք և Աշխարհականք՝ խնդրել յԱստուծոյ, զի և յետ այսորիկ կարողացուսցէ զիս գործել յԱյդուոջ եկեղեցւոյ Քրիստոսի իբրև ղժիր մշակ՝ զօգուտն սիրելի Աղգիս և Ս. Եկեղեցւոյս" . . . ։ Եւ 'ի վերջոյ օրհնեց համայն ներկայ հանդիսականները թէ եկեղեցական և թէ աշխարհական։ Եւ ապա Մաղթանքը կատարուեցաւ, Տ՝Տրին Ա. Հ. Օծութիւնը պահպանելով աւարտեց նոյն հանդէսը և եկն եմուտ ընդունելութեան սենեակը։ Ընդ միջապէս եկին և եկեղեցականք և իշխանք և ժողովուրդք մնաստել 'ի համբոյր Ս. Աջոյ և շնորհաւորել Ս. օծման Տարեդարձը Տ՝Տրին Ա. Հայրապետութեան։

Յետ սակաւ միջոցի՝ ելը Տ՝Տրին Ս. Օծութիւնը գնաց յատկապէս զեղեցիկ զարդարեալ և պատրաստեալ նախաճաշի սեղանը՝ հանդերձ եկեղեցականօք՝ իշխանօք և այլովք, երբեմն հրատարակուող Հ՝Խ՝Ա՝Փ՝Յ՝ ամսագրոյ Խմբագիր և այժմ Տ՝Տերսիսեան Աղգ.-Հոգև. Ուսումնարանի Տեսուչ Մեծ. Սահակեանոս Տ՝Տաղարեանց դիտական անձը՝ մի համառօտ և գեղեցիկ ճառ խօսեցաւ 'ի դիմաց Հոգաբարձուաց Տ՝Տերս. Ուսումնարանի։

Ի միջոցի նախաճաշի՝ Տ՝Տրին Ա. Հայրապետութիւն յիշելով Օգոստ. Կայսեր Ռուսաց Աղեքսանդր Բ. Տ՝Տիկողայոսեանի շնորհիւ՝ մեր 'ի Ռուսաստան գտնուող սիրելի Աղգայնոց վայելած ամեն հանգստութիւն և յառաջադիմութիւն Աղգային դաստիարակութեան և այլոց պարագայից մէջ, բաժակ առաջարկեց վասն կենաց Տ՝Տրին Կայսերական մեծութեան, և կեցցէներով խրմեցին։ Յետոյ ըստ առաջարկութեան Գ՝Տեր. Մակար Ս. Աբք եպիսկոպոսի՝ վասն կենաց Ա. Հ. Կաթողիկոսի, և կեցցէից՝ Ջերմ և համակրական զգացմամբք և աղաղակներով բաժակներ քամուեցան։ Ի վերջոյ կրկին Ս. Կաթողիկոսը յիշելով թէ՝ "Թէպէտ ես այժմ ասա ընդ Ձեզ եմ, այն վասն կենաց Ձերոց չեմ առաջարկեր, այլ վասն համայն Հայ Աղգիս. զձեզ չեմ որոշեր 'ի նոցանէ. Թէպէտ նոքա չեն ասա, այլ են Ձեր եղբարք. ուստի կ'առաջարկեմ բաժակներ՝ ընդ ոլորտս տիեզերաց՝ ուր ուրեք և դտանիցին՝ ամենեցունցդ 'ի միասին յանուն Հայ Աղգութեան, և բոլոր Հայոց խաղաղութեան, յառաջադիմութեան և սիրոյն համար". որ և կեցցէներու գոչմամբք դատարկուեցան բաժակներ։ Այսպէս վերջացաւ նախաճաշը և գնաց Ա. Հ. Կաթողիկոս 'ի սենեակն ընդունելութեան. ուր ամենեքեան ընդունելով կրկին զօրհնութիւն և համբուրելով զՍ. Աջ Տ՝Տրին Օծութեան, բաղում ուրախութեամբք և մխիթարութեամբք լցեալ մեկնեցան յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։

Յերեկոյին ևս լուսավառութեան մեծ հանդէս կատարուեցաւ. և խուռն բազմութիւն ժողովրդեան ներկայ էր։ Ուսումնարանի

Նարանի աշակերտք գեղեցիկ երգերով զուարճացուցին և մխիթարեցին ժողովուրդը։ Եւ այս հանդէսը տևեց մինչև ասխական ժամ Դ. և վերջացաւ մեծ յիշատակ և մխիթարութիւն թողով Տփխիսարնակ եռանդուն Ազգայնոց սրտից մէջ։

~~~~~~~~

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՄԵԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ.

Երջանիկ է օրս, յորում վիճակեցաւ ինձ նուաստիս, 'ի կողմանէ մեր ամենեցուն ելանել 'ի հանդէս բանախօսութեան՝ առ 'ի շնորհաւորել զերկուս սիրալի տօնս. զերկրորդ Ծաղկազարդն ասեմ, և զերրորդ տարեդարձ սուրբ Օծման Ձերդ Վեհափառութեան։ Երջանիկ է քաղաքս մեր, որ յայս առաջին անգամ արժանացաւ հաղորդ գտանել այսմ շքեղահանդէս տօնախմբութեան, և մնասցէ այս յաւերժական յիշատակ 'ի սիրտս Թիֆլիզարնակ Հայոց։

Հրաշափառագոյն է տօնս և բերկրապատար խնդութիւն մեր.—Երկնային զօրութիւնք, ըստ աւանդութեան վերանորոգողի առաքելական Աթոռոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ, տօնեն զտարեդարձ մուտ գործելոյ միածինաւոր Քահանայապետին յաղթական փառօք 'ի յերկինս, և մեք երկրայինքս կից ընդ նոսին տօնելով զայն՝ տօնեմք և զտարեդարձ Օծման Քահանայապետիդ մեծի բազմելոյդ 'ի Գահ սրբազան Առաքելոցն Թադէի և Բարդուղիմեայ, և առաքելապատիւ յաջորդի նոցա Գրիգորի մեծի Պարթևի մերոյ Լուսաւորչայ։

Ներեցէք ինձ, Հայկեան տէր, գեղեցիկ իմն յանդգնութեամբ շարադրել աստ զսակաւ ինչ բանս, ոչ 'ի ցոյց խրատու, այլ առ 'ի բերել 'ի հանդէս զ'ի Ձէնջ սկսեալ և զսկսանելի արդիւնաւոր գործս վասն յառաջադիմութեան ազգիս, և բարեկարգութեան սրբոյ Եկեղեցւոյ։

Նախախնամութիւնն վերին, որ անքուն ակամբ պահէ զյինքնէ հիմնարկեալ ուղղափառ Եկեղեցին Հայաստանեայց, յարուցեալ է ըստ յառաջագոյն ընտրութեան իւրում զքաջարթուն և զանձնանուէր Հովիւս 'ի շինութիւն Սրբոյ Եկեղեցւոյ, և 'ի պաշտպանութիւն ամբիծ Հաւատոյ. նա ինքն յառաջագոյն ընտրեաց զՁեզ յայն պաշտօն և կացոյց Տեսուչ 'ի վերայ փոքու Հօտին իւրոյ. "վասն որոյ էօծ զՔեզ Աստուած, Աստուած քո իւղով ուրախութեան, առաւել քան զընկերս քո" (Սաղմ. ԽԴ. 9), և լցոյց շնորհօք սուրբ Հոգւոյն. զի յայսմ, մեծի և ծանր պաշտման, որ բազում հոգոց պէտս ունի, առաջնորդեսցէ Ձեզ առ կատարումն ամենայն բարի ցանկութեանց լրութեան ազգիս։

Արդարև, օժանդակութեամբ Աստուածային Տեսչութեան, յորէ գահակալութեան Ձերոյ, զառաջին և զամենախնամ պարտս համարեցիք բանալ զուսումնարանս վասն երկուց սեռից հայացի մանկտեաց, յարուցանել 'ի մեռելութենէ զպայծառն Սրբոյ Էջմիածնի, և ձեռն արկանել 'ի զանազան շինութիւնս, որք կենդանի վկայք են գործունեայ հոգատարութեանց Ձերոց. այլ այս ամենայն սկիզբն է երկանց. զի սպասեն Ձեզ այլ ևս բազմադիմի ազգային գործք, որոց զուցէ ընդ առաջ ելցեն արգելք ինչ. բայց Վեհափառութիւն Ձեր, 'ի բանս Սրբոյն Պաւղոսի զօրով վարժեալ 'ի մանկութենէ չունիք վհատել. "Զի ոչ ետ Ձեզ Աստուած զհոգի վհատութեան, այլ զօրութեան, և սիրոյ, և զգաստութեան,, (2 Տիմ. Ա. 7). և յայնժամ ամենայն ինչ ունի յառաջ խաղալ 'ի լաւ անդր։

Երից իրաց պէտս ունիմք՝ շինութեան և բարեկարգութեան Եկեղեցւոյ 'ի վերայ սկզբնական հիմանց իւրոց, բարեկարգութեան հոգևորականաց, և հիմնելոյ զուսումնարանս, ուր գոն պակասութիւնք, և զեղեալն որչափ մարթ է, ըստ ներելոյ միջոցաց պահպանել և կանոնաւորել, զի այս վերջինս է միակ ճանապարհ լուսաւորութեան և յառաջընթացութեան ներկայ և ապագայ սերընդոց մերոց. սա կարէ ծնանել զբարեկիրթ անդամս ազգիս. սա կարէ պահպանել զկարգ յեկեղեցիս, 'ի Հոգևորականս և 'ի ժողովրդականս։ Վասն որոյ Օծեալդ յԱստուծոյ, զսկզբնաւորեալդ կատարելագործեա, մինչ օր կայ. "զի ընդ Քեզ է սկզբն աւուր զօրութեանս"(Սաղմ. ՃԹ. 4). և զոր ունիսդ 'ի գաղափարի՝ սկսեա, զի "յերեսաց քոց իրաւունք մեզ ելցեն, և աչք մեր տեսցեն զուղղութիւնս". (Սաղմ. ԺԶ. 2)։
~~~~~~~~